ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2024թվականիտարեկան աշխատանքային պլանի (այսուհետ՝ ՏԱՊ) իրականացման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետը, 35-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-րդ կետը և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված են եղել համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումները և պատասխանատու անձինք:

Հաշվետվության միջոցով ի մի է բերվում համայնքապետարանի տարբեր բաժինների կողմից տարվա ընթացքում կատարված աշխատանքները: Այն նաև արտացոլում է համայնքային բյուջեիծախսերի բաշխվածությունն ըստ ոլորտների:

ՏԱՊ-ով նախատեսված 24 ծրագրերից 14-ը ամբողջությամբ իրականացվել է, 7 ծրագիր չի իրականացվել,3 ծրագիրիրականացվել է մասնակի:

ՏԱՊ-ի հաշվետվությունը պատրաստվել է ծրագրերի պլանավորման և իրականացման աստիճանի չափման նպատակով:

Իրավական ակտի ընդունման արդյունքում Ստեփանավան համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի պլանավորումն ու իրականացումն ավելի արդյունավետ և համակարգված է իրականացվում: